ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԱՐՏՈՆԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 11. Ծանուցման ժամկետները

1. Պետական լիազոր մարմինը հայտի վերաբերյալ որևէ որոշում կայացնելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքի 10-րդ հոդվածով սահմանված կարգով կամ փոստային կամ կապի այլ միջոցներով, այդ թվում՝ հայտատուի նշած էլեկտրոնային փոստով որոշումն ուղարկում է հայտատուին: Որոշումներն ուղարկվում են հայտատուի նախընտրած՝ սույն մասում նշված եղանակներից մեկով: Եթե որոշումը հայտատուին ուղարկվել է նրա նախընտրած՝ ոչ փոստային առաքմամբ, ապա նա կարող է պետական լիազոր մարմնում այն ստանալ առձեռն որոշման ուղարկման թվականից՝ եռամսյա ժամկետում:

2. Սույն օրենքով նախատեսված այլ ծանուցումները և հարցումներն ուղարկվում են օրենքով սահմանված համապատասխան ժամկետները լրանալուց կամ գործողությունները կատարելուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքի 10-րդ հոդվածով սահմանված կարգով, փոստային կամ կապի այլ միջոցներով, այդ թվում՝ հայտատուի նշած էլեկտրոնային փոստով: Ծանուցումները և հարցումներն ուղարկվում են հայտատուին նրա նախընտրած՝ սույն մասում նշված եղանակներից մեկով: Եթե ծանուցումը հայտատուին ուղարկվել է նրա նախընտրած՝ ոչ փոստային առաքմամբ, ապա նա կարող է պետական լիազոր մարմնում այն ստանալ առձեռն ուղարկման թվականից՝ եռամսյա ժամկետում: